

ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գիրքի Պարտք 40 ՄԶ.
Պարտք 12
Վեցամս. 3
Պարտք 6
Օտար երկիրներու 21/21
Շահույթման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշէր կրկն անգամի հա-
մար 2 զուշէ. աւելի անգամներու
համար զառ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծի :



ՀԱՅԿԱՍՏԱՆ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս քննարկած յոսող քննարկած
ժախքը խմբագրութեան վրայ է :
Երազրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի : Գալա-
թիա Ստանդարտը չափաւոր թիւ
198, Գործ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ժախքը չփճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտարած նամակ, յողում, և
ետ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սնդդիական նոր նախարարու-
թիւնը տակաւին իւր ներքին կողմէ,
կերպութեամբ զբաղեալ է, և իւր
աշխարհավարութեան վրայ մեր անց-
եալներն ըրած խորհրդածութիւննե-
րէն աւելի բան մ'ըսելու հարկ չեմք
տեսներ : Այսու ամենայնիւ, օտար
լրագիրք կամ անոնց թղթակիցք կը
կարծեն թէ ազատական նախարա-
րութեան մը կազմութիւնը բաւական
իրարանցումի պատճառ եղած է Կ.
Պոլսոյ մէջ, թէ պալատը դիշերայն
խորհուրդներ եղեր և յարմար դատ-
ուել է Օսմանեան Սահմանադրու-
թեան կենդանութեանը նշան տալու
համար դադարեալ երեսփոխանական
ժողովը գումարել, և ըստ Պէրլինի
դաշնագրին 23 յօդուածոյն՝ Եւրոպա-
կան թուրքոյ դաւառաց կանոնա-
դրութիւնները քննելու համար մի-
ջադգային յանձնախումբ մը հըրաւի-
րել : Այս զրոյցները զուտ ենթագը-
րութիւնք կամ հաւանականութիւնք
կրնան լինիլ պալատական խորհուրդ-
ներ դուրսարուած լինելու կարծեաց
վրայ յարմարեալ, ինչպէս նաև կա-
րելի է այն խորհուրդներն ուրիշ պա-
ճառներու ևս վերադրել, օրինակի
համար հաշուեցոյցի հաւասարակշ-
ռութիւնն և երկուական տաղանդին
քարծուսն, Ալպանիական և Հիւսիս-
կան խնդիրները : Դժբաղդաբար խըն-
դիրք և զրադմունք չեն պակսիր իսկ
Օսմանեան երեսփոխանական ժողովն
հրաւիրելու դադարեալն, որ կարելի
է իրապէս նկատողութեան առնուած
լինի, տակաւին դուրսարուածեան
սկզբնաւորութիւն մը չունեցաւ : Կա-
նախարարութիւնն իւր ուշադրութիւն
Ալպանիոյ ծանր խնդրոյն վրայ դար-
ձուցած կ'երևի, յորմէ չարագու-
շակները կարեւոր դէպքեր, մինչև
իսկ պատերազմ նախատեսել կուզեն,
բայց որովհետեւ հետ. — այս կէտն անըս-
տողք է : Դարատաղ չուզեր եղեր 'ի
դէն դիմել, այլ կը խորհրդածէ թէ
իւր պահանջած հողերը տէրութեանց
կըքած դաշնագրին զօրութեամբ պի-
տի ստանայ : Թէ իւր պարտքը չէ
վեհաճողովին որոշումը գործադրե-
լու համար արևել թափել, Այսպէս
Դարատաղիք խնդիրն աւելի Եւրո-
պայի իրաւարարութեան թողուկու-
ղեն : Ռուսիա այս վայրկենիս որո-
մադիր չէ Դարատաղի պահանջը զօ-
րութեամբ պաշտպանելու : Ներքին
յեղափոխական շարժումն իւր բոլոր
աշարքութեան պէտք ունի : Լորիս
Մեղիքովի խոհմանութիւնն ու չափա-
ւորութիւնն յաջողեցաւ ըստ բաւա-
կանի յեղափոխական հրդեհին հան-
դարտեցնել, սակայն կրակը մարած
չէ, և կրնայ յանկարծ նորէն բռնկիլ :

Արտաքին խնդիր մ'ալ Ռուսիոյ
համար դժուարութիւններ յարուցա-
նել կ'սպառնայ, Չինաստանի կառու-
վարութիւնը Գուլճայի նահանգն յե-
տը կը պահանջէր, և ասոր համար
դեսպան մը զրկած էր 'ի Բեքապուրի-
Դաշնագիր մը կնքուելու, որով Գուլ-
ճայի մեծ մասը Չինաստանի պիտի
դաւանար, և Ռուսիա ռազմադիտա-
կան ամուր դիրքեր միայն պիտի պա-
հէր : Չինաստանի կայսրն այս դաշ-
նագիրը չվաւերացուց, և Բեքապուրի
զրկուած դեսպանը դատաստանի եւ-
թարկեց, որ 'ի մահ դատաւարութեան
է, պատժոյն դործադրութիւնն աշ-
նան յետաձգուելով : Երկնային վայս-
րութեանն այլինքն Չինաստանի կա-
ռավարութեան դեսպանական կամ
նախարարական պատիւն այսպիսի վը-
տանդներ ունի : Ռուսիա կը պնդէին
թէ Չինաստանի այս խրոխտ վարմուն-
քն Սնդդիոյ դրդմամբ է, ինչպէս որ
Ռուսիա ալ Շիր Ալի Խանը քաջալը-
րած էր Սնդդիոյ դիմադրելու : Չի-
նաստան պատերազմական պատրաս-
տութիւններ կը տեսնէ նաև, որոց
կը պատասխանէ Ռուսիա՝ սահմանա-
դրելոյ վրայ պաշտպանութեան մի-
ջոյններ ձեռք առելով : Կեդրոնա-
կան Սնդդի հրամանատար Գոֆման
զօրավարն իւր պաշտօնատեղին դար-
ձաւ Բեքապուրիէն : Ասկէ դատ,
Ռուսիա թէքքէի թիւրքաբէնները պատ-
ժելու դործն ունի իւր բազկաց վրայ :
Այս պարագայից մէջ կրնայ մակարե-
րիլ թէ Բեքապուրիի կառավարու-
թիւնն ազատ չէ բոլորովին դարձեալ
Արևելից կողմը բազմախնդրական նոր
արկածի մը մէջ նետուելու : Համար,
եթէ ուղղակի իւր ազդային պատուոյն
դէմ յարձակուով լինի : Դարատաղի
և Յունաստանի խնդիրներն հաւանա-
կանաբար Ռուսիոյ դործնական օժան-
դակութեամբ չափաւոր լուծուին, այլ
Եւրոպայի իրաւարարութեամբ : Իսկ
Եւրոպա ամենայն չափաւորութեամբ
կը շարժի, և երկու չկայ որ իւր աշ-
քեցութեան ներքեւ նոր պատերազմ
մը ծագի : Կարելի է Անդղիոյ աշա-
տական նախարարութիւնն աւելի ազ-
դու դիրք մը բռնէ, և շատ մը լընդ-
րոց մէջ Դադղիա ևս իրեն հետ հա-
մաձայն ընթանայ, սակայն քաղաքա-
կան շփոթութեանց և միջադպային
խռովութեանց պատճառ չտեսնուելու
թերեւ շատ խնդրոց մէջ Բ. Դուռը
պիտի կանխէ Եւրոպայի բազմաքը
լրացնելու, և եթէ բոլորովին չյաջո-
ղի, դործերն առ այժմ բանակցու-
թեանց և բարեկամական ազդարա-
րութեանց չըմանէն դուրս երևելու
նշան չեն ցուցներ :

Ալպանիական խնդիրը մայրաքա-
ղաքի դիւանագիտութիւնը կ'զբաղե-
ցնէ միշտ : Բերայի լրագիրները կը
ծանուցանեն թէ մեծ տէրութեանց

դեսպաններն հաւաքուելով երկրորդ
ժամուցադիր մը ներկայած են տու-
ր. Դուռն, որով իրենց առաջին ծա-
նուցադրոյն համար արուած առժա-
մանակեայ պատասխանը գոհացուցիչ
չեն դնեն, և կը պահանջեն միշտ
որ Օսմանեան կառավարութիւնը դի-
նու զօրութեամբ ետ առնու : Ալպա-
նիացոց դուռնած տեղերն և դանոնք
Դարատաղի յանձնէ : Թէպէտ Եւրոպա-
կան դիւանագիտութիւնն Ալպանիա-
կան շարժման պատասխանատուութիւ-
նը Բ. Դուռն վրայ ձգած էր, բայց Ալ-
պանիացոց Բ. Դուռն դէմ իսկ բռնած
դիրքին նայելով, կարելի չէ անոնց
ընթացից պատասխանատուութիւնը
կեդրոնական կառավարութեան ըն-
ծայել : Ալպանիական յայտարարու-
թիւն մը հրատարակած են, որով կը-
սեն թէ Պէրլինի վեհաժողովը Սերվիոյ
Դարատաղի և Ռուսիոյ անխախտ-
թիւն և հող շնորհեց, Հէրսէքն և
Պոսնիան Աւստրիոյ տուաւ, Պուլա-
րիոյ ինքնօրինութիւնը հաստատեց,
և Յունաստանի սահմաններն ընդար-
ձակել որոշեց : Իսկ Ալպանիացոց,
որք երկրին բնիկ ժողովուրդն են,
բնաւ շնորհ մը չըրաւ : Ալպանիացիք
կը յարեն թէ իրենք դարեւոր մեկուսի
էին, և պէտք է պահանջեն պետու-
թիւն մը կազմելու իրաւունքը : Թե-
սաղիա, Եպիրոս, և Ալպանիա երեք
միլիոն Ալպանիացոց հայրենիքն է և
պէտք է եղեր զայն անկախ և ազատ
պահել : Հեռագիրները ծանուցին
թէ Խաթիւյ աքընուական դերբաս-
տանին անդամներէն միոյն ներքեւ
Ալպանիոյ մէջ իշխանութիւն մը կազ-
մելու դադարեալ մը կայ : Այս դա-
դարեալ Ալպանիական Միութեան չը
կրնար վերաբերել, քանի իսկամիւր
նախնական հաւանականաբար իւ-
րապայի իշխան մը չեն ընդունիր : Բո-
տօրի ազատամարտից մէջ Հիւսայէթ փա-
շա անուամբ դեր խաղացող Անդրո-
ֆոնիացի Սէն Բէք դնդապեան և
քանի մ' Եւրոպացի սպայք կամադ-
դախնելը Ալպանիացոց հետ խառ-
նուած են : Օսմանեան աշխարհա-
կարութեան ժամանակ Խաթիւ դադ-
թիւն Բերիտանիայ Ալպանիացիներ
պրոտը ջուրի մէջ որս ընելու համար
Ալպանիա անցած են եղեր, և դու-
ցէ Սափապի իշխան մը խնդրելու դա-
դարեալն ստանցմէ ծագած լինի :

Այս չփոթութիւնը մեծ քննա կու-
տան անշուշտ թուրքոյ նիւթական
բարօրութեան և արտաքին համար-
ման : Անդղիացի պետական մարդոց
մէջ Լորս Տէրպիլի վիեննական թեր-
թի մը թղթակցին հետ խօսակցու-
թիւն մ'ունեցաւ, ուր խիստ վհատա-
կան կերպիւ խօսած է թուրքոյ վիճա-
կին վրայ : Այսպիսի լրագրական հը-
տատարակութիւնք, կամ 'նոյն իսկ ա-
տենախոսութիւնք շատ անգամ ան-
միջական կարեւորութիւն զուրկ են :

Լորս Տէրպիլի դուռ իւր երկտարա-
դութեան ժամանակ Բիւրկի լինի մէջ
Հիւսայէթ նպատաւոր առնախօսու-
թիւն մ'ըրած էր : Բայց Յունաստան
մինչև հիմայ թեսաղիա և Եպիրոսն
առած չէ : Ռուսի տուանց այսպիսի
յայտարարութեանց չափազանց կա-
րեւորութիւն տալու, անհար է ժըն-
տել որ թուրքոյ այս ներքին և ար-
տաքին վիճակն օտարաց աչքին լաւ
տպաւորութիւն մը չընեն : Պէրլին-
ի իսկ նախարարութիւնը բաւական
նպատաւոր կ'երևէր թուրքոյ, և
անոր անկման վրայ՝ կարողութիւն
նորակազմ նախարարութիւնն աւե-
լի նպատաւոր կը կարծուի Հիւսայէթ
և Սափապ : Վիեննայի լրագիրք մին-
չև իսկ կը կարծեն թէ Պ. Կըլա-
տըմիս Պալքանի թերակղզւոյն մէջ
ինքնօրէն իշխանութիւններէ բազ-
կացեալ դաշնակցութիւն մը կազմե-
լու կուսակից է, զվարարա 'ի բաց
թողլով : Այս պատճառաւ իշխաւ
թերթերն հաւանական կը համարին
որ երկու կողմերուց համաձայնութիւ-
նը վերանորոգի ' Անդր-Ռուսական
համաձայնութեան մ'առաջին առ-
նելու համար :

Տակաւին Անդղիոյ նոր նախարա-
րութիւնն իւր պաշտօնեայներն ընտ-
րելու զրադած է : Կոնստանտինո-
պոլսի դեր մը կը բռնէ Կ. Պոլսոյ դե-
պանը : Կեռագիրն արդէն քանի մ'ան-
ձանց անունը տուաւ մայրաքաղա-
քի դեսպանութեան դժուարին պաշ-
տօնին կոչուելու համար : Առնոց մին-
չև Լորս Բարլինի ֆոլիոյն թէ Կ. Պոլ-
սոյ մէջ յաջողելու համար դրեթէ
անհնարութիւն կայ : Միւս ընտրելի-
ներէն և ոչ միոյն անուններ մը տա-
կաւին պաշտօնական չէ : Սըքարեւ,
պաշտօնի մը կարեւորութիւն տուողը
և զայն յաջողութեամբ վարողը մար-
դըն է : Այս նկատմամբ Կ. Պոլսոյ
Անդղիական դեսպանն անձնապէս ևս
մեծ կարեւորութիւն ունի : Սըք Լէ-
յարս իւր փորձառութեամբ, յա-
ջողակութեամբ և ամեն կողման հետ-
լաւ յարաբերութեամբ հանդերձ
կիսով չափ միայն կրցաւ յաջողիլ :
Խորհուրդներ և բարեկամական օգ-
նութիւն տալէ չդադրեցաւ : Բայց
զործնական արդիւնքը մեծ չեղաւ,
և այժմ իւր գլուխներուն հետ քա-
ղաքական տապալեցէն հեռացուցն
ստոյգ կ'երևի :

Հին աշխարհին այլ և այլ մասե-
րէն և դիւտաւորապէս Եւրոպայէն Ռ-
մերիկայի Միացեալ—Նահանգները
դադարեալութեան շարժումն
դադարեալ կը շարունակէ, և միշտ կա-
ւելնայ : Նիւ Եօքը Հէրբըլ լրագի-
րը մարտ 28 թիւ թերթին մէջ խըմ-
բագրական յօդուած մը կը զոհէ
այս իրողութեան, յորմէ կը հաւ-

կըցուի թէ վերջերս այս շարժումն աւելի քիչ տարածութիւն ստացած է և միայն չորս թու մը մէջ 8840 դադարեցողութիւն կային այլ և այլ նաւահանգիստներէն, և թէ միայն ներկայ տարւոյ մարտ ամսոյ մէջ հոն հասած դադարեցողութիւն 50,000ն անցած է: Այս մարդիկ Ամերիկա կերթան իրենց դրամագլխով կամ իրենց մտաւոր և մարմնական կարողութիւններով նոր գործեր գլխաւոր, և առանց ամենափոքր մասն Ամերիկայի հպատակ կը լինին և իրենց բնակութիւնն հոն կը հաստատեն: Այս դադարեցողութիւնը ընդհանրապէս յաջող եղբ կունենան, ըստ որում առած դարձած է թէ Ամերիկայի մէջ աշխատատեղ մարդիկ անօթի չեն մնար, և հին աշխարհէն դէպի նոր աշխարհն եղած այս շարժման շնորհիւ է որ 40 տարուան միջոցի մէջ Միացեալ-Նահանգաց բնակիչներուն թիւը կրկնապատկած է:

Կարիւրաւորի դարձումն դէմ մի քանի կտրուկներ հրատարակած Պ. Ֆերէնձօնա իտալացի գրագետը մօտերս դաշտին հարուածներով սպաննեցաւ մի քանի չարագործ ռամկաց կողմէ, որք իրեն չէին ներքիւր հակադրութիւնն առ հռչակաւոր դորա վարն: Պ. Ֆերէնձօնա դուշակած էր իւր գլխուն դալիքն, և կանխաւ պատրաստած կտակին մէջ՝ իտալիոյ թագաւորին գլխութեան կը յանձնարարէր իւր երկտարադ. ամուսինն ու մանկունքը:

Աւստրիական ոստիկանութիւնը մօտերս թրիէստէն վանտեց Պ. Գալա-լոթիթի անուն իտալացի նշանաւոր բանաստեղծին, որ միանգամայն իտալիոյ երեսփոխանաց ժողովին անդամ է: Այս անձն Աւստրիական լուծին ներքեւ դաժնող իտալացուց հայրենասիրութիւնը գրգռելու ամբաստանութեան ներքեւ էր, և թէպէտ իտալիոյ խորհրդարանին մէջ այս գէպքը մեծ կարեւորութիւն ստացաւ և առաջին նախարար Պ. Գալա-լոթի հրապարակաւ պարտաւոր թրիէստի ոստիկանութեան բռնած ընթացքն, այսու ամենայնիւ երկու դրացի կառավարութեանց միջև փոխա-նակեալ բացարարութեանց վրայ խընդիրն իւր ծանրութիւնը կորոյս:

Ռուսիոյ Ունչակական գործադիր յանձնախումբը մօտերս իւր գործնական հիմնադիրն հրատարակեց հետեւեալ տողերուն մէջ ամբողջելով զայն.

«Առաջին, Ռուսիոյ արդի բռնասպանական կառավարութիւնն իբրեւ թշնամի նկատել հարկ լինելով, զայն տապալելու համար ի գործ դրուելիք բոլոր տնօրէնութեանց մէջ՝ նպատակը կ'արդարացնէ զմիջոցը:

«Երկրորդ, - Այս կառավարութեան հակառակ երող ամեն տարւոր, թէև մեղ հետ դաշնակից չը լինին, մեր օգնութիւնն ու պաշտպանութիւնը պիտի վայելեն:

«Երրորդ, - Կառավարութեան դէմ ունեցած մեր պատերազմին մէջ անոր բացարձակապէս օգնող և այդպէս չէզքրութեան ստանձնան տնայնող անհատք և ընկերական խումբք իբրեւ թշնամի պիտի նկատուին մեր կողմէն:

Պէրլիոյ դաշնագրին 22րդ յօդուածին զօրութեամբ, Պուլըրիոյ կառավարութիւնն ինք պիտի հոգար դաշնագրին կնքուելէն յետոյ իշխանութեան երկիրը կեցած Ռուս զօրաց ծախքը: Վերջին լրոյ նայեալով, Բեզբասովսկի կառավարութիւնն

այս ծախքը հաշիւը Սօֆիա դրիւր է կարգադրութեան համար:

Լորտ Պիքնֆիլդ՝ պաշտօնէն ինքնալք առաջ՝ Լորտութեան աստիճան առաւ իւր քարտու դար Պ. Մոնթէկլի: Բօրիսի, ինչպէս նաև իւր քաղաքական բարեկամաց անոնց:

ՀՆՈԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս տարւոյ հասած հետքեր

Լոնտոն 5 մայիս. Արտաքին գործոց նախարար Լորտ Կրանվիլ այսօր պաշտօնական ընդունելութեան մը մէջ յայտարարեց թէ Անգլիոյ նոր նախարարութիւնը Պէրլիոյ դաշնագրին հաստատ պահուիլը կընդունի, թէև անոր հեղինակ լինելու պահանջում չունի: Անգլիա լորտ յարեց թէ Անգլիա կան նախարարութիւնը Եւրոպայի մէջ որ և է դաշնակցութեան հաւանութիւն չը պիտի տայ, և Գաղղիոյ հետ մտերմական յարաբերութիւնները պիտի շարունակէ: Ըստ լորտ Կրանվիլի կարծեաց, Գաղղիացի և Անգլիացի գործակալաւրաց միջև կեցող համաձայնութիւնն Եւրոպայի մէջ ամեն դժուարութիւնները պիտի փարատէ:

Լոնտոն 5 մայիս.	
Օտ. Բօնո.	10 3/8
Փոխ.	1865 11 1/2
»	1869 11
»	1871 70 1/2
»	1872 48
»	1873 40 5/8
»	Եւրոպայ. 39 1/8
Անգլ. Բօնո.	99 7/16

Փարիզ 5 մայիս.	
»	10.68
»	36,
Գաղղ. »	118.87 1/2
»	30/0 Նոր 36.50

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Արդէն ծանուցուած էր թէ ապրիլ 16/28ին Լոնտոնի Գաղաքացական պաշտօնատան մէջ մեծ միութիւն մը տեղի պիտի ունենայ Հայաստանի, Քրդաստանի և Արեւմտեան Պարսկաստանի սովետոց օգնութեան համար: Այս շարժում եկած Անգլիական լրագրերէն կը տեղեկանամք թէ բազմաթիւ աղետակաւք և մեծ անձինք այս Միթիին մէջ բանախօսութիւններ ընելու խօսք տունք են, բայց Միջոցի նախարարական փոխութեան վերաբերեալ զբաղմանց պատճառաւ այն օրն իրենց ներկայութիւնն անկարելի լինելով, Միթիինը փափաքուած չքով և կանոնաւորութեամբ կարենալ դուրսարուելու համար: մայիս 6ին (Ն.Տ.) յետաձգուած է, Հետեւաբար, այսօր (հինգշաբթի) տեղի պիտի ունենայ:

Մայրաքաղաքի Սէմֆօռ լըրա-դիրն իւր երէկուան թուոյն մէջ Սովի Հայաստան խորագրով յօդուած մը կը հրատարակէ, ծանուցանելով թէ առջի օրը մայրաքաղաքի Սպանիական դեսպանատան մէջ Բերաբը նակեալ բաղմամբիւ պատուաւոր անձինք դուրսարուած մ'ընելով, Փոքր Սովի սովուն դարման տանելու միջոցները խորհած են: Ասոր համար որոշուած է մեծ վիճակահանութիւն մը սահմանել, երեք միլիոն տոմսակէ բաղկացեալ, տոմսակը 1 ֆրանքի: Այս վիճակահանութիւնն երեք դասակարգի բաժնուած է. առաջին դասակարգն երեքքէն մինչև վեց ամսուան մէջ պիտի քաշուի 75,000 ֆրանք պարգևով, երկրորդը վեց ամսէն մինչև մէկ տարուան մէջ պիտի քաշուի 125,000 ֆրանք պարգևով: Իսկ երրորդ դասակարգի վիճակահանութիւնն, որոյ պարգևը 200,000 ֆրանք է, բոլոր տոմսակաց ծախուելէն յետոյ տեղի

պիտի ունենայ: Գեղարուեստական նիւթերէ ալ պարգևներ պիտի սահմանուին Օամ: Պանքան՝ շահող թիւերուն պարգեւները կ'երաշխաւորէ, և Պանքային տնօրէն Պ. Պօլթըրը ընդհանուր մասնախմբին նախագահութիւնն ընդունած է:

Խրիսթաբի Էֆէնտի Զօղրաֆօս 200 սակի տուաւ ի նպատակ Գաղղիոյ սովետոց, Պ. Ի. Բամօնտ և Ընկ. ալ 100 սակի: Օամ: յանձնախմբին նուիրատուաց ցանկին գումարն այժմ 3500 սակի է:

Սըր Հէնրի Լէյըրտ Անգլիոյ նոր նախարարութեան կազմութիւնը պաշտօնապէս ծանոյց Բ. Դրան, և Արեւելեան գործոց նկատմամբ արտաքին գործոց արդի նախարարին տեսութիւնները բացատրեց Օամսեան նախարարութեան, ի մէջ այլոց, Անգլիոյ դեսպանը պնդեց սա կէտին վերայ թէ Թագաւորին նոր նախարարներն հաստատապէս որոշած են Պէրլիոյ դաշնագրին չգործադրուած բոլոր յօդուածները գործադրել տալ:

Ամերիկեան ընկերութիւն մը Միացեալ-Նահանգաց կառավարութեան նշանաւորութիւն ստացաւ Պաղեստինեան երկաթուղի մը հաստատութիւն, որ Ս. երկրին ամեն կողմերը պիտի բանի: Երկաթուղի դժին դըրուի որոշուած են մէկ կողմէն Գազիրէ քաղաքն և միւս կողմէն Մուսուլ՝ Տիգրիսի վրայ: Երկաթուղիոյ այս գլխաւոր գիծը ճիւղեր պիտի ունենայ Երուսաղէմ, Եփատ, Նապլուզ, Պէյրութ, և ի հարկին Հալէպ, Խաբէսէրուն և Կարին քաղաքաց հետ:

Վէլի Մէհմէտին խենթ լինելը կամ չլինելը վերջապէս հասկցուեցաւ: Բժշկական մասնախումբն երէկ իւր վերջնական տեղեկագիրը ներկայեց, Պ. Տօք. Մօնճիէրի կողմէն ստորագրեալ, որ կը յայտարարէ թէ Վէլի Մէհմէտին մինչեւ ցարգ յիմարութեան նշան բնաւ չէ ցուցուցած: Բանտ դռնուած Ժամանակն ալ այդ պիտի բան չտեսնուեցաւ իւր վրայ: Բժշկական մեծ խորհուրդն այս տեղեկագիրը միաձայնութեամբ ընդունեց, և պատերազմական ատենին պիտի ներկայէ:

Լէվընթ Հէրըտ լրագրոյ տնօրէն Դամադարպետ Պ. Հուրիթ Երըր Անգլիացին իւր լրագրին խափանման հետեւեալ օրը «Թուղթ Առաջին Հուրիթ Երըրի առ Բիւզանդացի» անուամբ թերթ մը հրատարակած էր, որոյ մէջ կ'ընդունուէր թիւներ կային Ա. նախարար Բարձր. Սոյիտ փաշայի դէմ: Վաղըթ կը ծանուցանէ այսօր թէ Օսմանեան պատժական դատարանն այս բանին համար Վ. Հուրիթ Երըր 18 ամիս բանտարկութեան և Լէվընթ Հէրըտի տնօրէնն ալ մէկ տարի բանտարկութեան դատաւարուած է ի բացակայութեան, և մինչև տան և հինգ օր պայմանաժամ տուած է դատարարին ընելու: Անգլիոյ դեսպանատունն յայտարարեց թէ Անգլիական թարգմաններ կայ դռնուած չլինելով, այս վճիռն օրինաւոր չլինար լինիլ: Իսկ Բ. Դուրա պատասխանեց թէ թարգմաններ հրաւիրուած՝ բայց ներկայ գրանուիլ յանձն առած չլինելով, այս առարկութիւնն անընդունելի է:

Պէյքօզէն երկու ժամ հետի Ալի Պէհատըր գիւղն առջի գիւղեր 25-30 զինեալ աւազակներ յարձակում մը ընելով, կանանց և արանց ձեռքեր

ըր կապեցին և բաւական վնաս տրւին դիւղին: Վաղըթ կը ծանուցանէ թէ քաղաքացեալ Մազհար փաշան երէկ զօրք դրիւր է այս շարագործաց ետեւէն:

Հալէպի հարուստ խաւմը Բ. Դըրան ծրագիր մը ներկայեցին ճիւտեի և Մէքքէի միջև երկաթուղի մը շինելու արտօնութիւն խնդրելով: Կառավարութիւնն այս ծրագրին մէջ ցուցուած պայմանները նպատաւոր գտած լինելով, ի նկատ առեւ է այս գործը:

Կառավարութիւնն որոշեց տան և հինգ հազար գրիւ (քիլէ) Եփատայոյն բաշխել Ատարազարի և Եալովայի երկրագործ ժողովուրդեան, որպէս զի կարենան պէտք եղած քանակութեամբ սերմ ցանել:

Ոստիկանութեան նախարարը պաշտօնական ազգով մը բոլոր օսմանեան հպատակաց հրաւէր կը կարգայ նորահաստատ ոստիկանութեան (բոլիս) կազմութեամբ համար, Ոստիկան պիտի ընդունուի ամեն Օամ: Հպատակ որ մարմնայն վրայ հիւանդութիւն չունի, որ 23 տարեկանէն վար կամ 45 տարեկանէն վեր չէ, որ բնաւ տճրի մը համար դատապարտութիւն կրած չէ, որ թուրքերէն կը զրէ ու կը կարգայ և բարոյականը լաւ է: Գրուիլ ուղղորդներ երկու շաբթի և չորեքշաբթի օրերն ոստիկանութեան Գուռն յատուկ դիւանը պիտի երթան ընդունելութեան քնննութիւնը կրելու համար:

Արեւելեան Բուսէլի սահմանագրեցող վրայ տապաւորութիւնն ընդ Պաշտօնագրերը թաթար-Պաղեստինեան Մակեդոնիա վաճառք տանող հինգ Պուլըրներ: Տօքաթ անուն իսլամ գիւղի մը մօտ կապելով ըսպանեցին, և անոնց մարմինը կտոր կտոր ըրին: Նոյն ուղղութեամբ ծանրաց եղած քան երկու Պուլըր վաճառականք ալ իրենց տեղը չեն հասած, և արդէն ասոնցմէ տան և թիւն գիւղները դռնուեր են, որք նոյնպէս յօշոտեալ էին:

Վերջին վիճակագրութեան մը նայելով, Լոնտոնի մէջ այժմ 87,072 աղքատ կայ, որոյ 47,047 աղքատ տանոցներու (Ուօրդ - Հաուս) մէջ ընդունուած են, իսկ 40,025 մուրացկանութեամբ կ'ապրին: Լոնտոն յի աղքատաց այս դուրմարն (87,072) 1877 տարուայ դուրմարն հետ բաղդատմամբ 3,618 հոգի աւելի է, 1878 տարուայ դուրմարն հետ բաղդատմամբ 4,198 հոգի աւելի: Իսկ անցեալ տարուայ (1879) դուրմարն հետ բաղդատմամբ 2,944 հոգի աւելի:

Տրապիզոնէն ապրիլ 11 թուով հետեւեալ կը գրեն մեղ.

«Այս օրերս քաղաքիս մէջ շատ զարմանալի դէպք մը պատահեցաւ, որ թէև լոողին անհաւատալի կը թուի՝ սակայն քանի մը բժշկաց վերակալութեամբ հաստատուած է, Ահաւարի եղելութիւնը:

«Սոյիտ անունով Խափշիլի (Արապ) մը չիտցուի ինչ պատճառաւ՝ նոյն իսկ իւր փորը կը ճեղքէ, աղիքը դուրս կը թափին զորս իւր ձեռքով կը կարէ:

«Մինչև այստեղ թերևս յիմարութիւն համարուելով այնքան զարմանալի չթուի, սակայն այն է հետաքրքրականը, որ այդ մարդը տակաւին մինչև երէկ կապրէր այդ վայրագութիւնը իւր վրայ գործելէն իբր տան և հինգ օր յետոյ, տեղի նշըլ մ'անդամ՝ երեւցած: չէ, բայց իւր կերածէն բնաւ օգուտ չըտրեր, վասն զի քանի մը վայրկեան յետոյ դուրս կը փաղէ: Կարածը փոր աղիքն է իւր 5 մեթր երկայնութեամբ: Եթէ երբեք չարուակէ տեղը չունենայու, որ անհաւանական կը թուուի, Սոյիտ անունագրութեան մեռնելու դատապարտուած է:

«Երբ իրեն կը հարցուի թէ ինչ էր շարժառիթը այդպիսի տարօրէն

1,01,010-01 300 0 1